ՍՄԲԱՏ ԲԻՒՐԱՏ
Խմբագրութիւն «Փիւնիկ» ի Աղեքսանդրիա

S. Burat
Rédaction «PUNIG»
Alexandrie

ԵԳԻՊՏՈՍ
Ղր.
ՏԱՐԵԿԱՆ... 45
ՎԵՑԱՄՍԵԱՅ 25

ԲԱԺՆԵԳԻՆ ԿԱՆԽԻԿ է
Ձեռագիրները չ'դարձուիր

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ
Ֆր.
ՏԱՐԵԿԱՆ... 15
ՎԵՑԱՄՍԵԱՅ 8

ԿՈՎԿԱՍ
ՏԱՐԵԿԱՆ Ռուբ. 6
Ազդեր կ'ընդունուին մասնաւոր պայմաններով

ՓԻՒՆԻԿ

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

կը հրատարակուի ՀԻՆԳՇԱԲԹԻ, ԿԻՐԱԿԻ առաւօտները

ԾԱՆՈՒՑՈՒՄ

«ՓԻՒՆԻԿ»ի խմբագրութիւնը կը յայտարարէ թէ.

Ա. Մայիս 16էն սկսեալ տպարանը փոխադրուած է քաղաքիս Ֆրանգ փողոց, 35 թիւ Ապու-Հէյճ խանը, ուր հաստատուած է նաեւ խմբագրատունն ու փորագրատուն մը։

Բ. Տէր Սմբատ Բիւրատ, հրատարակիչ, տնօրէն-խմբագիր «Փիւնիկ»ի և Տէր Գրիգոր Նազարէթեան գրաշար-փորագրիչ, յիշեալ թուականէն սկսեալ ընկերակցած են մասնաւոր պայմանագրութեամբ մը, որուն ուժովը սեփականատէրերն են իրենք տպարանին, որ կը կոչուի

ՍԻՍՈՒԱՆ

Գ. «Սիսուան»ը կը կատարէ զանազան լեզուներով տպագրական ու փորագրական յանձնարարութիւններ.

Այցեքարտ, հացէքարտ, Մահազդ, Նամակագլուխ, հարսնիքի ազդ, ևլն.

Քաուչուէ և պղինձէ կնիքներ, փլագներ, արծաթ և ոսկի մոնոկրամներ, ևլն.

Դ. «Սիսուան»ի մէջ կը հրատարակուի «ՓԻՒՆԻԿ»ը, առ այժմ շաբաթը երկու անգամ, հինգշաբթի ու կիրակի օրերը. իսկ յառաջիկայ յուլիսին, ամեն օր. կը հրատարակէ նաեւ ուրիշ թերթեր, գրքեր ևլն.

Ե. «Սիսուան»ը բաց է ամեն օր առաւօտ ժամը 7-12 և երեկոյեան ժամը 2-7։

ՉԱՓԱՒՈՐ ԳԻՆ

ՄԱՔՐՈՒԹԻՒՆ, ԱՐԱԳՈՒԹԻՒՆ

ՃՇԴԱՊԱՀՈՒԹԻՒՆ

ՎՏԱՆԳԸ

—

Չարագուշակ և աղետաբեր օրերու փոթորիկը այսօր դարձեալ կ՚սպառնայ քար ու քանդ ընել Հայութեան վերջին մնացորդն ալ որ տակաւին իր անհամար սիրելեաց կորուստը կողբայ դառնագին։

Քաղաքական նպաստաւոր երեւոյթներու տակ շպարուած մօտալուտ ընդհանուր ջարդի մը վերսկսման տխուր հաւանականութիւնը կը նշմարուի։

Պալքանեան արիւնագոյն հորիզոնին վրայ «Մակեդոնական հարց» անուամբ Եւրոպական Թուրքիոյ մէջ օսմանեան պետութեան օրհասի ղօղանջն է որ կը հնչէ որուն ահեղ ձայնէն Թուրքիան իր խարխլած հիմերէն կը սարսի և Սուլթանը սարսափահար աշխարհին կը սպառնայ իսլամական մոլեռանդութեան բորբոքուած հրակիզը հրդեհել, այրել, քանդել, ոչնչացնել և՛ Մակեդոնացին և՛ Հայը յանուն բարեկարգութեան։ Սուլթանին սարսափը նիւթող և բռնկեցնող տարրը Մակեդոնական գօմիթէներու շարժումները չեն աւելի քան այն խորհրդաւոր և սոսկումնալից հեռանկարը որ բարենորոգման ծրագրի քօղին տակ դրացի երկու հզօր պետութեանց դիւանագիտական մրճինը պատրաստած լինի կանխաւ։ Դիւանագիտութեան մրճինը ընդունակ է այս՛, միշտ ամեն գոյնի և ներկի մէջ մտնել ելլելու և ի հարկին անմեղներու արեամբն իսկ կարմրիլ՝ եթէ իր շահերը այնպէս պահանջեն. և սակայն անցեալի և ներկայի մէջ կատարուած իրողութիւնները մէկ կողմէն, Սուլթանի բանակներուն կեդրոնացումն ու շարժումը միւս կողմէն, կը հաստատեն թէ Թուրքիան ոչ թէ սոսկ Մակեդոնիոյ մէջ բռնկած հրդեհը մարելու կը փութայ, այլ իր գոյութեան սպառնացող մօտալուտ վտանգի մը դիմագրաւելու, որը վճռական դէպքերու համեմատութիւնները կստանայ։ 1876ի արիւնահեղ դէպքերուն պատմութիւնն է որ այսօր գրեթէ նոյնութեամբ կը կրկնուի։

Դիւանագիտութիւնը, այլեւս անկարող է ընդվզումի ներկայ հոսանքը կասեցնելու, որը հզօր ու գոռ թափով մը յառաջ կը սուրայ։ Պալքանեան լեռներուն ծոցէն Մակեդոնական զարթնած ոգին է որ կը մռնչէ կը ցատկէ. իր կորիւնները խողխողող Թուրքին ու Անասունին դէմ, և դիւանագիտութիւնը յուսահատաբար ետ ետ կը քաշուի, ի զո՛ւր խաղաղութիւն կը պոռայ Եւրոպան՝ այս սպառնալից վտանգին առջեւ. այո՛, խաղաղութի՜ւն, բայց խաղաղութիւն ազատութեան մէջ եւ ո՛չ թէ ստրկութեան. ահա՛ միակ դարմանը այս բոլոր չարեաց. ու Մակեդոնական հարցով տանջուող մեծ ու փոքր ազգերու բանակները «դէպի սահմանագլուխ» կը խուժեն՝ դիւանագիտութեան փայփայած երազները իրականացնելու անշուշտ և ոչ թէ քրիստոնեայ ափ մը ժողովուրդ փոթորիկէն փրկելու համար։

Այս բոլոր շարժումները՝ ըստ երեւոյթին մեզ Հայերուս նպաստաւոր՝ և սակայն միւս կողմէն ահաւոր վտանգը կսպառնան նաև մեզ նման անզէն և անկազմակերպեալ ժողովուրդի մը գոյութեանը. ո՛վ պիտի համարձակի Հայը ոտնակոխ չ՚ընելու պաշտպանը հանդիսանալ՝ առանց իր կեանքը վտանգելու։ Ո՛վ է որ փոթորկի բոպէին կըսենք, պիտի կրնայ խօսք հասկցնել կատաղած և սուրը մերկացուցած Թուրքին ու Քիւրտին, եթէ Հայը իր գոյութիւնը, իր կեանքը, իր պատիւը, իր օճախը պաշտպանելու, պահպանելու տարրական պարտքը չզգայ, գէթ ինքնապաշտպանութեան պարտքը կըսենք, կատարելու քաջութիւնը չ՚ունենայ։ Այս անգամ դժուար թէ հիւանդ Մարդը յաջողի Պալքանի մէջ լարուած ծուղակէն ազատիլ. իր պարտութեան փոքրիկ նշանի մը բոպէին՝ Սուլթանը անկասկած Թրքահայը իսպառ ջնջելու դիւային ծրագիրը պիտի գործադրէ հրով և սրով. հոն, Հայուն աւերակներուն վրայ, իր խարխլած գահին հիմերը ընդմիշտ հաստատելու համար. հոն՝ իսլամի բոլոր խուժդուժ տարրերուն անմատչելի որջը դարձնելու և վերջին ու գո-

բաւոր թումբը կանգնեցնելու օտարներու ոտնձգութեանց և ձգտումներուն դէմ. իր այդ ձգտումներուն հետամուտ սկսած է Սուլթանը Ռուս–Թրքական պատերազմէն ի վեր. օտար սահմաններուն մէջ ապրող Չէրքէզներ, Թաթարներ, Թիւրքեր աղբի թէֆիներով կը կրէ և Անատոլուի մէջ կը թափէ։ Թէ Սուլթանը պիտի կարենա՞յ իր այդ բարբարոս ոյժերուն կեդրոնացումովը արդի եւրոպական քաղաքակրթութեան զօրաւոր հոսանքին երկար դիմադրել՝ տարակուսելի է. և սակայն ստոյգ է հայուն բնաջնջումը՝ այդ վայրագներուն հոսանքին առջև։

Հայութիւնը դարերով փոթորկի մէջէն քաշած քաշկռտած է իր գոյութիւնը, հետևարար թող չի կարծուի թէ այս ներկայ փոթորիկներէն ալ կրնայ մի կերպ ճողոպրիլ։ Անցեալ դարերու մէջ ներկայ քաղաքական և տնտեսական կազմակերպուած կառաղի մրցումը և կոիւը զրեթէ գոյութիւն չունէին, բռնակալի մը արշաւանքն ու զայրոյթը յաճախ նուէրներով և աղերսներով կը մեղմանային. իսկ ներկայ քաղաքակրթեալ դարու տիրապետող ոգին՝ շահն է, որ ազգերու և երկիրներու ճակատագիրը կը վարէ. դարերու հոլովմանց հետ, հոլովուեցան նաև կեանքի գոյութեան հին նահապետական պայմանները. հայութեան քայքայումը այս անգամ, ինի ան զաշոյնով կամ պայթումով, անխուսափելի կը թուի։

Մինչև ցարդ հայերս այս կամ այն քաղաքականութեան և թաքթիքին հետևեցանք, իսկ ներկայ և ապագայ քաղաքական կացութեան հանդէպ մեր ո՛չ ներքին և ո՛չ ալ արտաքին քաղաքականութիւնը ո և է դիտակութիւն ունի։ Պատրա՞ստ ենք մեր կիսաւեր տունը կանգուն պահել մօտալուտ հոսանքին առջև. ահա միակ հարցը—մեր գոյութեան և չգոյութեան հարցը — որ պէտք է զրաւէ անխտիր ամէն մի հայու միտքն և ուշը։

Ըսինք թէ մեր ցեղին գոյութիւնը պահպանելու համար մենք հայերս ունեցանք գործելու մեր տարբեր տարբեր թաքթիքները և սակայն այսօրուան կացութեան հանդէպ կարծեմ ոչ ոք կրնայ չի խոստովանիլ թէ՝ հայ ժողովուրդին ինքնապաշտպանութեան միջոցներ—զէնք և հաց—պէտք է հայթայթել. այլապէս հայ ժողովուրդը դատապարտուած է բնաջնջման. 1895ի ընդհանուր ջարդերէն առաջ լսուող ստրկանալու և համակերպելու ոճրագործ յորդորները, այն դառն փորձերէն վերջ, պէ՞տք է որ այսօր դարձեալ կրկնուին. ստրկութեան բոլոր տեսակ ու գոնէիկ միջոցները դարերով ի զուր փորձած ենք. այս անգամ ալ ինքնապաշտպանութեան վեհանձն զգացումը թող ուռեցնէ մեր կուրծքերը վայրենի թշնամւոյն հանդէպ. հայ ժողովուրդի պաշտպանութեան համար փորձուած բազուկներ ու անմատչելի վայրերը չեն որ մեզ կը պակսին, այլ այդ բազուկները զինող ու կերակրող հարուստներ, որոնց մէկ փոքր մասին հաւաքական կամքը կարող է միանգամ ընդմիշտ ապահովել հայ ժողովուրդը և հայրենիքը՝ սպառնացող վտանգներէն։ Ժամանակ է որ հայ հարուստը, հայ կղեր գասակարգը, ազգին ներկայ ճգնաժամին, իր ազգային և մարդկային նուիրական պարտքը և կոչումը ըմբռնէ և անոր շքեղ բարձրութեան վրայ կանգնի. այլապէս պատճառ պիտի դառնայ հայութեան մէկ մասին բնաջնջմանը, իսկ մնացեալ մասին այլասերման, վհատման, որուն պիտի հետևի բնականաբար կրօնափոխութիւն, օտարացում՝ մղուած զէթ իր մարդկային գոյութիւնը և պատիւը փրկելու բնազդէն. և ո՞վ է ասոր պատասխանատուն։ Այն գլխաւոր վտանգները զորս մենք ուրուագծել ուզեցինք հոս, աչքի առջև ունինք 1895ի ջարդերու միջոցին յայտնուած բոլոր երևոյթները որոնք այսօր կրնան մեզի աւելի պայծառ գոյներով ցոլացնել մեր առջև ցցուած ներկայ ծանրակշիռ կացութեան վտանգը—իսպառ լուծուելու տարրալուծուելու վտանգը։—

Գահիրէ, 23 մարտիս 1903

ԱՐԱՊԻ

ՏԱՂՏՈՒԿ

Ինչպէս վերջին ճառագայթը հեքիատօրէն
Կը ցոլցլայ նազանքով մը մեղկ ու ցաւոտ
Փրփուրներուն,
Տալով անոնց համբոյրներ որ պէտք է տեսեն
Բաժանումի գիշեր մ'ամբողջ, մինչ առաւօտ
Ու գալարուն,

Կ'անհետանայ մութին մէջ խոր, մութին մէջ սև
Կարծես արցունք մը որ ցնդի սիրականին
Այտին վրայ,
Ա՜խ, ինչպէս որ ճառագայթը ադ լուսաթև
Հրաժեշտը տալով փրփրող, խեղճ ալիքին
Լռիկ կուլայ.

Գիրկընդխառնուած յիշատակիդ, ցոյսս ալ այդպէս,
Դառնութեանս գիշերին մէջ կ'անհետանայ
Հառաչագին.
Ու յառելով ինծի զբաղոտ նայուածքը հեզ,
Հրաժեշտը կուտայ քայց ո՛չ մէկ գիշերուայ
Այլ վա՜խ, վերջին.

Մեռելային վայրենի մը նման բուի
Մրոնչիւնը ուժգին, մութին մէջ սգաւոր
Կը խլանայ
Փոթորկայոյզ սրտիս՝ որ խօլ կը գալարուի,
Անյուսութեան ու դառնութեան անդունդ մը խոր,
Որուն հիմայ՝
Ցոյզերէն ալ յոգնած, հոգիս կը տաղտկանայ։

* * *

ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ 25 / 5 / 03

ԱԶԳԱՅԻՆ

ՊՈԼՍԱՀԱՅ ԹԵՐԹԵՐ

Այս օրերս դարձեալ զանազան տեղերէ ձայներ կը լսուի Եգիպտոսի Հայոց Առաջնորդ Տ. Յովսէփ եպիսկոպոսի պաշտօնավարութեան ընթացքին դէմ։ Բողոքներն անհոգ ու անփոյթ է ժողովրդեան օգտին ու կրթական բարւոք գործին զարգացման համար, իր անձնական հանգիստն ու շահը միայն նկատի ունի, կըսեն, և կը փափաքին որ առաջնորդական նոր ընտրութիւն կատարուելով՝ գործունեայ ու պարտաճանաչ եկեղեցականի մը յանձնուի Եգիպտոսի Հայոց առաջնորդութեան կարեւոր պաշտօնը։ Շատ կը ցաւիմք՝ նկատելով որ կը կատարուի մեր գուշակութիւնը։ Երբ այդ ընտրութիւնը ըրաւ Եգիպտոսի Հայոց գաւառական ժողովը, գրեցինք թէ՝ առանց լաւ ու շրջահայեաց քննութեան կատարած է ընտրութեան գործը, և ապա պիտի զղջայ։ Այս գուշակութիւնն ըրած էինք՝ Տ. Յովսէփ եպիսկոպոսի անցեալ պաշտօնավարութեանց քաջածանօթ ըլլալով։ ՓՈՒՆՋ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԹՐՔԱԿԱՆ ԽԺԴԺԱՆՔՆԵՐ

Վիէննա, 14 մայիս. Բէստեր Լոյտ կը յայտարարէ թէ՝ հիւպատոսական սայոց տեղեկագիրներու համաձայն՝ խոլական փորձեր եղած են քանի մը տեղերու մէջ բնաջինջ ընելու քրիստոնեաները, առանց խտրի ազգայնութեան. Բէստեր Լոյտը կ'ըսէ որ եթէ այս տեղեկութիւնը ճիշդ է, իրերու վիճակը սպառնալից է աւելի քան երբեք. կ'երեւայ թէ իրօք ծանրացած ըլլայ կացութիւնը Մակեդոնիոյ մէջ, մեծ տէրութեանց հսկողութենէն խուսափելու միտումներու հետեւանքով։

—*Կ. Պոլիս*, 15 մայիս. Եւրոպական Թուրքիոյ վալիները նոր ու խիստ հրահանգներ ստացան Ելտըզէն, որ զիրենք անձնապէս պատասխանատու կը բռնէ ջարդերուն։

—*Լոնտոն*, 16 մայիս. Թայմզ հետեւեալ հեռագիրը ստացած է Սոֆիայի իր թղթակիցէն.

«Պաշտօնական ու դիւանագիտական շրջանակներուն մէջ առնուած լուրերը կը հաստատեն թէ՝ Մանասթըրի վերջին խառնակութիւնը մահմետականներուն կողմէն ծագած է։ Ամենայոռի ոճիրներ գործուած են մարդերու կողմէ, որոնք, իրենց համակրութիւնն աւելի զօրաւորին կողմը ցոյց տալու փափաքելով, պաշը պօզուքներուն հետ միացած են չարչարելու համար Պուլկարները, ինչպէս որ Յոյները չարչարուած էին 1897ին։ Պաշտօնական տեղեկագիրներու համաձայն, շրջակայ գիւղերուն մէջ Պուլկարներուն ջարդը աւելի մեծ եղած է քան ինչ որ կ'ենթադրուէր առաջուընէ, բայց մինչեւ հիմայ չը գիտցուիր ճիշդ թիւը սպաննուած անձերուն։ Ջահերուն մէջ մեծ թիւով Յոյներ ալ գտնուիլը՝ մեծ կարեւորութիւն ունի, որովհետեւ հոն պայթում մը կայ կրօնային մոլեռանդութեան, որ երբէք տարբերութիւն չը դներ ցեղերու։ Մահմետական բնակչութիւնը վախցեր է որ Ս. Գէորգայ օրը պուլկարական խռովութիւն մը կը ծագի. ու կը ծանուցուի թէ այս տօնին նախընթաց օրը Պաշը-պօզուքներն ու կանոնաւոր գնդերը նախապատրաստուեր են կռուի մը պատահականութեան հանդէպ։ Յաջորդ օրը, յուզում մ'առաջ եկած է ձերբակալումէն ու բանտարկումէն Պուլկար կօշկավաճառի մը, որ կը տաղտկացընէր թուրք յաճախորդ մը, պարտք մը պահանջելով անկէ։ Բայց կէսօրուընէ առաջ ո՛և է խառնակութիւն չէր պատահած, երբոր մահմետական մը՝ պուլկար մը սպաննեց։

Պաշը-պօզուքները զինուած, համախմբուեցան այն ատեն ու սկսան քրիստոնեաներու հալածանք ու ջարդ որոնք տեւեցին շատ մը ժամեր։ Ի վերջոյ, հիւպատոսներէն մէկ քանիներուն խնդրանքով, Վալին հրամայեց մահմետականներուն զինաթափումը։ Մօտակայ գիւղերը բնակչութիւնը վախցընելու նպատակով դրկուած գնդերը

գիւղացիներուն հետ կռուի բռնուեցան։ Զաքարի գիւղին մէջ, երեսունի չափ Պուլկարներ սպաննուած կամ վիրաւորուած են, Պաշըպօզուքները կը տանջեն անպաշտպան գիւղացիները։»

— **Մակեդոնական նոր յայտնութիւններ**. Պուլկար երիտասարդ խմբապետ մը, Բօնուէլի Բանդէվ, Վիեննայի համալսարանին նախկին աշակերտ, որ վերջերս Թուրք զօրագունդներուն հետ ընդհարումի մը մէջ վիրաւորուած էր ու հիմայ կը դարմանուի Վիեննայի մէջ, կը պատմէ թէ կազմակերպութիւնը 54 շրջանակներու բաժնուած է ապստամբական հողը, մէն մի շրջանակ՝ հրոսախումբ մը պահելու պարտաւոր։ Հրոսախումբերուն անդամները կը զինուարգրուին գիւղերուն մէջ, յօրպաճիներուն ձեռքով յաճախ, աղէկ նշանաձիգներէն ընտրուած, զինուորական բուն մարզանքը չ'են ստանար ասոնք, բայց խնամով կը վարժուին ռումբ ու փամփուշտ գործածելու։ Իւրաքանչիւր անդամ առ նուազն մէկ ռումբ կը կրէ, և իրենց պետերը կը նետեն ընդհանրապէս ռումբերը, եթէ թշնամին առ առաւելն 15 քայլ հեռի գտնուի։ Ընդ ամենը 150 հրոսախումբ կայ հիմայ, 20,000 մարդերով։ Սարաֆօֆ իր բանակը դրած է Պիթօլիայի շրջանակին մէջ, ուր կեդրոնացած է ամբողջ կազմակերպութիւնը։ Սարաֆօֆ յայտարարած է թէ՝ Սելանիկի ռմբերը նախահարուածն էր՝ Եւրոպային դուռը զարնուած, և թէ կարգը պիտի գայ ուրիշ քաղաքներուն, եթէ այս ազդարարութիւնը մնայ անհետևանք։

— **Մեծ կորուստներ**. Անցած շաբթուան մէջ Թուրք հեծելազունդ մը կռուի բռնուած է Ալբանիացի գունդի մը հետ, Իփէկի ու Եաքօվայի միջև։ Երկու կողմէն ալ մեծ կորուստներ տրուած են. Թուրք իշխանութիւնները վերապահումներ կ'ընեն, բայց կը թուի թէ կատաղի կռիւներ տեղի ունեցած են։ Նազիֆ բաշայի հրամանատարութեան տակ գտնուող օժանդակ զօրքեր ղրկուած են Վօրօսօվիչէ։ Կը պնդուի թէ Իբէկի լեռը քաշուած ալբանիացի պետերուն կիները պատանդ կը պահուին։

— **Թայմզի յայտնութիւնները**. Թայմզի Սելանիկի թղթակիցը կը հաղորդէ որ Մակեդոնիոյ ռուսական ու աւստրիական հիւպատոսները, որոնք քիչ մ'առաջ մեծ վստահութիւն ունէին բարենորոգումներուն գործադրութեանը վրայ, հիմայ խիստ յուսահատ եղած են։ Թղթակիցը կ'աւելցնէ թէ ապստամբութիւնը ծանրակշիռ համեմատութիւններ առած է և թէ Թուրքիան պիտի չի կրնայ գլուխ հանել գործը, եթէ Եւրոպան չը թոյլատրէ անոր ի գործ դնել Հայաստանի մէջ գործածուած միևնոյն միջոցները։ Մահմէտականներուն գրգռումը կ'աճի օրէ օր ու ջարդերու հոտ կ'առնուի։

— **Կարիպալտիի կարծիքը**. Զօրավար Ռիչիօթթի Կարիպալտի, Ճիորնալէ տ'Իթալիայի խմբագրութեան յայտարարած է թէ՝ Արեւելքի մէջ կացութիւնը կը ծանրանայ և եթէ իտալական կառավարութիւնը չը՝ վճռէ միջամտել, պէտք պիտի ըլլայ կարիպալտեաններու բանակ մը կազմելու որուն բնաբանը պիտի ըլլայ. «Ալբանիան՝ Ալբանիացիներուն»։ Իտալիան, կ'ըսէ զօրավարը. չը կրնար ներել Աւստրիոյ երթալ Սելանիկ, ո՛չ իսկ Նովի-Պազար։

— **Շուէտացի սպաները**, Կ. Պոլսէն հաղորդուած է թէ՝ Մակեդոնիոյ մէջ օսմանեան ոստիկանութիւնը վերակազմելու պաշտօնով կանչուած շուէտացի երկու սպաները Բերա հասած են ամսոյս 17ին։

— **Աւստրիական պատրաստութիւններ**. Աւստրիան վերջերս շարժման մէջ կը դնէ շատ մը գունդեր, ղրկելու զանոնք Պոսնիա։ Զօրավար Կալկօճի հրամանատար կարգուած է, ծանրակշիռ դէպքեր կը սպասուին մինչև յունիսի կէսը։

— **Բարիզ**, 1 մայիս. Երկայն վիճաբանութենէ մ'ետքը, Խորհրդարանը 237ի դէմ 313 ձայներով ընդունեց կառավարութեան կրօնային քաղաքականութիւնը։ Ասիկայ Թան, Լիպէրթէ, Տէպա և ուրիշ կարեւոր թերթերու կողմէ գոհունակութեամբ կը նըշանակուի իբրև յաղթանակ մը Գօմպի դահլիճին համար։

ԿՐԷՏԷԻ ԿՅՈՒՄԸ։ Գանէ, 16 մայիս. Կրետական Ընդհ. Ժողովը խանդավառ կեցցէներով բուլարկից օրակարգը կդրիչն Յունաստանի կցումին համար։ Բանաձեւին ընթերցման պահուն, մահմեդական երեսփոխանը, Էքմէկ Սոֆթա Զատէն ոտքի ելաւ բողոքելու, բայց իր ձայնը խեղդուեցաւ ազաղակներով։ Այնուհետեւ բուռն տեսարան մը տեղի ունեցաւ բողոքարկուին ու Ցասքալոյանիս երեսփոխանին միջև, ու Էքմէկ Սոֆթա Զատէն ի վերջոյ գուրս հանուեցաւ ժողովէն։

Այնուհետեւ ժողովուրդը ցոյց մ'ըրաւ ի նպաստ կցման, Հալէբայի մէջ, ժօրժ իշխանին բնակարանին առջև,

ՊՈՒԼԿԱՐԱԿԱՆ ՆՈՐ ԴԱՀԼԻՃԸ.

Բեթրոճ զօրավարը, Նախարարապետ ե Արտ. գործերու նախարար.

Բեթքոճ, Ներքին գործերու.

Կենադիեճ, Արդարութեան.

Շիշմանիօճ ուսուցիչը, Հանրային կրթութեան.

Մանուկեճ, Եկեղեցական ու Երկրագործական.

Սարլօճ, գնդապետը, Պատերազմական.

Բուքօճ, Հանրօգուտ շինութեանց ու, առաքմատպէս, Վաճառականութեան.

Դահլիճին երեք առաջին անդամները. —Բէթրոճ, Բէթքոճ ու Կէնատիէճ—, Ստամպուլցիներ են, իսկ մնացած չորսը՝ Ֆէրիտանտ իշխանին մարդերը։

—**Կացութիւնը Ծանրակշիռ։** Թուրքերը կը հարածեն այս օրերս քրիստոնեաները, Կ. Պոլիս և բովանդակ կայսրութեան մէջ։

Լոնտրա, 16 մայիս. Օտէսա, Սթանտարտի թղթակիցը կ'իմացնէ թէ՝ Պալքաններուն մէջ կացութեան ծանրութիւնը կը յայտնուի հարաւային Ռուսիոյ զաւառներու մէջ տեղուող զինուորական տենդոտ գործունէութեամբ։ Բոլոր նաւատորմիղները կազմ ու պատրաստ են պատերազմի ու ամեն պատահականութեան։ Զօրավար Լուսքին, Հարաւի գնդերուն մեծ հրամանատարը, հիմայ գնդերը կ'անցընէ աչքէ։

Կ. Պոլիս, 23 մայիս. Ալպանիան խաղաղեցնելու համար Սուլթանին դրկած պատգամաւորութեան անդամները միշտ բանտարկուած կը մնան։ Զօրագնդերն երբ որ մտեցան, Ալբանիացիները զանոնք Իփէկէ փոխադրեցին ռուսս–սերպ Ցէքանի վանքը։ Հիմայ ապստամբները կը սպառնան քանդել այդ վանքը, եւ մէ թարբ զօրագնդերն աւելի յառաջանան. Ռուսիան Դանէն խնդրած է պաշտպանել վանքը։ Վերջին պահուն նոր լուր մը կայ թէ՝ բանտարկեալներն արձակուած են ու Կ. Պոլիս պիտի վերադառնան։

—**Նոր դաւ մը.** Վերջերս երեսն հանուեցաւ Պուլկարս մակեդոնական նոր դաւ մը, որուն նպատակն էր ոչնչի հանել Բերլինի ուսական զեկուցումները։

Պստերազմի խորհուրդներ. Քիչիք Սայիտ բաշան, նախկին Մեծ–Եպարքոսը, Սուլթանէն երկու անգամ կանչուեցաւ անց ցած շաբթուան մէջ ու խորհրդակցաւ Սուլթանին որ այսուհետեւ զէնքով բանակցի Պուլկարիոյ հետ, մակեդոնական հանդոյցը կարելու և Թուրքիան, միանգամ ընդ միշտ, ազատելու համար ոստոստիներէն, պատերազմական հանդերձանքներէն ու զինուորական շարժումներուն անվերջանալի ծախքերէն։

—**Ֆերիտ բաշան.** Արդի Մեծ–Եպարքոսը, որ պատերազմի կուսակից չէ Սայիտին պէս, այլ խաղաղութեան ու բարեհորդութիւններուն, հիմայ իր ձայնը կը լսեցընէ Սուլթանին ու տերութիւններէն ալ կը պաշտպանուի։ Բայց Սայիտի խօսքերը Եըլտըզի մէջ՝ շատ լաւ կը թարգմանեն տենդոտ տրամադրութիւնները, որոնք այս պահուս կը տիրեն Թուրք շրջանակներուն մէջ. Սայիտին խօսքերը նշանակալից են իբրեւ ախտանիշներ մեծաշուք պատերազմին։

—**Մակեդոնական պետերդ.** Մակեդոնական գօմիթէին պետերը համաձայնութեամբ վճռած են հատուցում ընել իրենց մինչև հիմայ հետեւած քաղաքականութեան մէջ. մեծ հարուածները, դրդեցնող սոսիր-

ները են. պիտի շարունակեն, Սելանիկէ յետոյ Կ. Պոլիս. ասիկայ ըսուած վերջացած է։ Այս կերպով արծուն պահել կ'ուզեն Եւրոպան, զգուշանալով լոկ, ամեն գնով, Թուրքիային ու Պուլկարիային, մանաւանդ, Թուրքիային, Ռուսիային ու Աւստրիային միջև պատերազմի մը պայթումէն, որուն ծախքերը աւժաղը Մակեդոնիան պիտի ըլլայ, կ'ըսեն իրենք։

—*Ալբանիացի պետերը.* Էօմէր Ռուշտի փաշան վերջերս յաղթութիւն մը տարաւ Ալբանիացիներուն վրայ. կէս պաշտօնապէս հաղորդուեցաւ նոյնպէս թէ Իփէկ ու Տիաքօվա քաղաքներն ալ գրաւեց իր գնդերով։ Արդ, այդ լուրերուն վրայ, կարծուեցաւ թէ Ալբանիան քիչ մը հանդարտած է. ընդհակառակն, կացութիւնը վատթարացաւ։ Մեծ թիւ մը կը կազմեն դեռ չը կաշառուած կամ ձեռք չ'ինկած Ալբանիացի պետերը, որոնք հիմայ լեռները քաշուած են, անմատչելի լեռներ, ուր ձեռք չը հասնիր իրենց. հոն, այս խրոխտ ու աննուաճ պետերը՝ վայրկեանը կըսպասեն. երբ որ Թուրք զօրագնդերը քաշուին շրջակայքէն, իրենք, այդ պետերը վար պիտի իջնան լեռներէն ու պիտի նոր սկսին իրենց գործը. բնաջնջել քրիստոնեաները, մանաւանդ Սերպերը։ Հետևաբար Սուլթանը, 50 հազարէ աւելի մարդ պէտք է պահել հոն, որպէս զի կարենայ ինքզինք յարգել տալ Ալբանիացիներուն։

ԲԱՑՈՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՓԻՒՆԻԿ

ԱՄԵՆՕՐԵԱՅ ԹԵՐԹԻՆ

Որ կ'սկսի այս տարուան Յուլիսէն հրատարակուիլ Աղեքսանդրիա, նոյն ուղղութեամբ և հարուստ պարունակութեամբ։

Ամենօրեայ Փիւնիկի խմբագիր-տնօրէնն է ՍՄԲԱՏ ԲԻՒՐԱՏ, որուն պիտի աշխատակցին երկու օգնական—խմբագիրներ ու մէկէ աւելի թղթակիցներ։

ՊԱՅՄԱՆՔ

Բաժանորդագրութիւնը կը սկսի ամեն ամսոյ սկիզբէն և կէսէն։

Ձեռքէ կը ծախուի հատը հինգ միլիէմի

	ԵՌԱՄՍ.	ՎԵՑԱՄՍ.	ՏԱՐԵԿ.
Եգիպտոս ղրշ.	30	60	120
Արտասահման ֆր.	10	20	40
Ամերիկա՝ տոլար	2	4	8
Կովկաս ռուբլի	4	8	16

ԱՌԻ՛ԹՆ Է

Մեկնումի պատճառով ծախու դրուած է հոյակապ ՊԻԱՆՕ Դաշնակ մը Տիար Ճ. Բարաղեանի քով, Ռօզէդ փողոց, 7։

Առի՛թն է, Առի՛թն է, Առի՛թն է։

ՅՈՎՀԱՆՆԷՍ Ս. ԲԱՇՃԵԱՆ

Աթթարինի մեծ փողոցին վերի ծայրը աջ կողմի թիւ 82 խանութը.

փայտ, Փայտածուխ, Քարածուխ, Քարիւղ, Սփիրթօ, ևն.

Մեծաքանակ ու փոքրաքանակ վաճառում.

Յանձնարարութիւնները կը կատարուին անմիջապէս, յաճախորդներուն բնակարանները յանձնուելու պայմանով։

Խանութը միշտ բաց է առաւօտեան ժամը 6 1)2 էն մինչև երեկոյեան ժամը 8։

Ճշգապահութիւն, արդար կշիռք և աժանութիւն։

ԳՆՈՒՄՆԵՐԸ ԿԱՆԽԻԿ

Դիմեցէք և փորձեցէք

Ազգարինի վերջին ծայրը աջ կողմը թիւ 82 խանութը։

Ֆրանսերէնի, տաճկերէնի եւ տօմարակալութեան հմուտ երէտասարդ մը պատրաստ է պաշտօնավարել վաճառատան մէջ։ Արտասահման ալ կերթայ գոհացուցիչ պայմաններով, դիմել խմբագրատունը։